

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹՅԱՆ


(Մեկդյան 110-ամյակի առթիվ)

Վ. Գ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

Պատմադիտության, ազդադրության, լեզվի ու գրականության բնադավառում Գրիգոր Խալաթյանի կատարած հետադոտությունները անջնջելի հետք են թողել հայ մշակույթի ու դիտության պատմության մեջ: Նրա բեղմնավոր գրչին են պատկանում ավելի քան քսան տպագիր աշխատություններ, հայ և օտար մամուլում սփռված բազմաթիվ հոդվածներ, ինչպես և անտիպ ուսումնասիրություններ:

Անկեղծ հայրենասեր էր Խալաթյանը, ժողովուրդների բարեկամության, մշակութային կապերի ընդլայնման ու զարգացման ջատագով:

Գրիգոր Աբրահամի Խալաթյանը ծնվել է 1858 թ. սեպտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլում, ուր դրանից ոչ շատ առաջ Ալաշկերտի քրդերի հալածանքներից խույս տալով, բնակություն էր հաստատել նրանց ընտանիքը: Սկզբնական կրթությունը ստանալով ծննդավայրի հոգևոր դպրոցում, 1868 թ. նա ընդունվում է Լազարյան ճեմարանը, ուր արժանանում է պրոֆ. Մ. էմինի համակրանքին և հովանավորությանը: Տակավին երիտասարդական տարիներին Գրիգորը գրեթե ավարտում է մեր դասական պատմիչների, հայ և օտար լավագույն հեղինակների ընթերցանությունը և փորձեր է անում գրելու պիեսներ, բանաստեղծություններ, հատվածներ թարգմանում Գյոթեից, Հայնեից, Պուլկինից, իսկ Շեքսպիրը դառնում է նրա պաշտամունքը¹: Խալաթյանի տարերքը, սակայն, հայագիտությունն էր. «...Իմ բոլոր ուժ» և եռանդս նվիրել եմ այդ ասպարեզի (հայագիտության — Վ. Վ.) համար, — ասում էր նա, — որ դեռ մանկական օրից ամենից ավելի սիրելի, ամենից մոտ է եղած իմ սրտին: Իսկ եթե կարողանամ մի փոքր ծառայություն անել մեր անմշակ պատմության և մատենագիտության ուսումնասիրության համար, երիցս երջանիկ պիտի համարեմ ինձ միշտ»²:



¹ Տե՛ս Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գրիգոր Խալաթյանի ֆոնդ (այսուհետև՝ ԳԱԹ, ԳԽՖ), ր. 3, № 8:

² ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆ., № 791:

Հակառակ այս վճռին՝ 1877 թ. ավարտելով ճամարանք, խալաթյանը երեք տարի սովորում է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Էմինի հորդորով ու խորհրդով 1880 թ. հրաժարվում է լիցիզի գաղնալու մտադրությունից և փոխադրվում պատմա-բանասիրական ֆակուլտետ:

Հետաքրքրասեր, խանդավառ ուսանող էր խալաթյանը: Նա մասնակցում էր դիտական հարցերի քննարկմանը, կարդում էր ունիթերատներ, կալսերական աղագրական ընկերության անդամ էր⁶, ղեկավարում էր հայ ուսանողների գրական միությունը⁶։ Թիֆլիսի «Հայոց հրատարակչական ընկերության» ակտիվ գործիչն էր: Ընկերությունը խալաթյանի նյութական օժանդակությամբ և ղեկավարությամբ հրատարակում է Ռ. Պատկանյանի երկերի ժողովածուն⁷: խալաթյանի անդրանիկ հոդվածը նվիրված է Պլենայի պաշարմանը: Հոդվածագրի կարծիքով ուսանելի հաղթական բանակը կարող է աղատություն բերել ժողովրդի արևմտյան հատվածին: Հաջորդ ուրախությամբ են ընդունում ուսուցենքի հաջողությունները, գրում է ուսանող խալաթյանը, բանի որ նրանց միջոցով պետք է բացվի «փրկության դուռը, ...գուցե Պլենայի անկումը արևելյան քրիստոնեից վերականգնումը գաղնա»⁸:

Գրեթե ամեն ամառ խալաթյանը այցել էր պալիս հայրենի երկրին, արձակուրդներին նույնպես նրա որոնող միտքը զազառ շունչեր նրան պաղեցնում էին պատմական հուշարձանները, ձեռագրերը, մշակութային օջախների փնտրելը և ընդհանրապես այն ամենը, ինչը որ դիտական արժեք կամ հասարակական երևույթ կարող էր համարվել: Այդ տեսակետից հետաքրքրական են 1881 թ. էմինին հասցեագրած նրա նամակները խալաթյանը շրջում է Շիրակում, լինում է Անիում, գնում է Էջմիածին, Սյունիք, Աշտարակ, Երևան և ծանոթանում հնություններին ու տեղացիների ապրելակերպին⁹:

խալաթյանը 1883 թ., ղեկն ուսանող եղած ժամանակ, հրատարակում է «Պատմա-Փարսիցի և գործը նորին» ուսումնասիրությունը, որը մի կարևոր երևույթ էր մեր պատմագրության համար և հիմա էլ չի կորցրել իր դիտական արժեքը:

խալաթյանը համալսարանն ավարտում է 1884 թ. հուլիսի 2-ին գնահատությամբ: Ապրիլին, պետական ծախսով, Պետերբուրգի վրայով գնում է նվիրույթ՝ կատարելագործվելու: Բ. Պատկանյանը, որ մայրաքաղաքում էր, մի շատ գրավիչ առաջարկություն է անում հանապարհորդին: Ֆրանսիական ակադեմիան գիմել էր Պատկանյանին դիտական որոնումներ կատարելու նրուսադեմում, Էջմիածնում և այլուր՝ խաչակրաց պատմությանը վերաբերյալ նյութեր հավաքելու համար, սակայն վատառողջության պատճառով նա այդ անել չէր կարող: Այդ գործերին նա հարմար է գտնում խալաթյանին: «...նա (Պատկանյանը) — Վ. Վ.) առաջարկեց ինձ, որ եթե կամիմ՝ շտապեմ օգտվել այդ գեղեցիկ գեղքից, որո նմանը, ինչպես նա է ասում, ստեպ չի պատահիլ հայ ուսումնականին, վասնզի այդպիսի հանապարհորդություն բացի Էջմիածնի և

⁶ Տե՛ս «Աղագրական հանդես», 1912, 22-րդ գիրք, էջ 249:

⁷ Տե՛ս ԳԱԹ, ԳԽՆ, ք. 1, № Մ 20—23:

⁸ Տե՛ս «Աղագրության ծրագիր», Առաջարան, 1887, Մոսկվա:

⁹ Տե՛ս «Մշակ», 1883, № 48 և 1887, № 10:

¹⁰ Տե՛ս ՊԿՊԱ, ֆ. 30, ց. 1, գ. 1, ք. 49:

¹¹ «Մշակ», 1877, № 93:

¹² «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 155:

մանավանդ Երուսուղեմի հարուստ մատենադարանաց հետ ծանոթությունն, առիթ կուտա և Ֆր(անսիայի) ակադեմիայի հետ հաղորդակցություն ունենալու Մանավանդ, պնդում էր նա, մի երիտասարդի համար, որ նոր է մտել գիտություն ասողարեղը»¹⁰։ Իրերի ընթացքը, անկախ Խալաթյանից, խափանում է զործի հաջողությունը։

Խալաթյանը մայիսի 15-ին ժամանում է Վիեննա և սկսում աշխատել Մխիթարյան մատենադարանում։ Նա քրքրում, ուսումնասիրում, արտադրում է ձեռագրեր, աշխատելով աչքից բաց չթողնել ոչ մի բան, «...որ հետո չափսոսամ, չփռմանեմ, այս է բոլոր և իմ հոգսը»՝ գրել է նա էմինին¹¹։ Գերմաներենի մեջ խորանալու նպատակով նա անցնում է Սլոնիսեն, որտեղ դասեր է առնում և ապրում նույն նպատակով քաղաք եկած օտարազգի երիտասարդների հետ. «Բավական բաղմաթիվ է մեր ընկերությունը, — գրում է նույն նամակում, — որ անշուշտ տեղիք կուտա միշտ միմյանց հետ լինել, խոսել, վիճել, կարճ՝ զործնականապես ուսանել գերմաներեն լեզուն, որ իմ գլխավոր նպատակն է»։ Նա հաճախում է նաև համալսարանի պարսից լեզվի և կուլտուրայի պատմություն, գերմանական գրականության դասախոսություններին։

Խալաթյանը իրավամբ համարվում է հայ գիտական ազդադրության հիմնադիրը։ Գիտության այդ ճյուղով, ինչպես նշել ենք, նա զբաղվել էր ղեկավարում տարիներին։ Նրա մասնակցությամբ 1880-ական թթ. սկզբներին հրատարակվում է ռուսաց ազդադրական ծրագիրը¹²։ Երիտասարդ ժողովրդագետը նախ ձեռնարկում է այդ ուղղությամբ հիմնել մի սամազիր, իսկ հետո ռուսական օրինակով մշակում է հայկական ազդադրության «Ծրագիրը»։ «Կհուսամ, որ հանդես հրատարակելու պատեհ ժամանակը մերձ է, — գրում է Սրվանձտյանցին, — եթե ոչ առաջիկա աշնանը (1886 թ.), դեթ ձմեռը կամ դալ դարնանք պետք է որ լույս տեսնի հայ ազդադրական հանդեսը»։ Մեղ անհայտ պատճառով ամսաթերթը չի հիմնվում։ Նույն նամակում հայտնում է, որ թերևս «Ծրագիրը» շուտ լինի և «տարածվի ձրիապես»։ Վերջինս լույս է տեսնում 1887 թ. «Ծրագրով» սահմանվում էր առարկան, ուղղություն տրվում բանահավաքներին և բաղմապատկում նրանց թիվը։ Ինչպես հայտնի է, «Ծրագիրը» ընծայված էր Սրվանձտյանցին։ Հեղինակը խորին զգացմամբ մի նամակով գիրքը առաքում է վերջինիս. «...Այսպիսի գալիս եմ, — գրում է նա, — ողջունելու Ձեզ վաղուց խոստացած «Հայ ազդադրական ծրագրով», որի ճակատին զրի ինձ համար միշտ հարգելի և սիրելի Ձեր անունը։ Այս մի պարտք է, որ ես կատարեցի ամենայն հաճությամբ... Դուք ամենից ավելի եք նպաստել, կասեմ ուղղակի — Դուք եք գլխավոր շարժումը պատճառողը, ուստի ամենայն իրավունքով զբոյգի բոյոց քեզ հատուցանեմ»¹³։ Ծրագրից հետո մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի ազդարանությունը։

Ծրագրի առաջին դնահատողներից էր Գ. Սրվանձտյանցը, որը պատասխան նամակում մի առանձին ջերմությամբ է խոսել գիտնականի կատարած ազգօգուտ գործի մասին. «Մեր հայրենիքը որքան անհուն նորություններ կընծայե յուր հնություններն, — գրում է նա Խալաթյանին, — ասոս որ հետաքրքիրը կպակասի։ Վրա հասավ Ձեր «Հայ ազդադրության ծրագիրը»... Լա-

¹⁰ «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 157։

¹¹ Նույն տեղում, էջ 158։

¹² «Հայ ազդադրության ծրագիր», Առաջաբան։

¹³ ԳԱԽ, Գ. Սրվանձտյանցի ֆ., բ. 2-րդ, № 340։

¹⁴ Հանդես, № 4

փեցի գրածներդ... նվիրեցի Ծրագիրդ երեք անձանց... Որքան մեծ բացվեցան անոնց աչքերը. Ծրագրիդ շառագայթներով, ուր կլուսավորեր, կառաջնորդեր և կցուցաներ ամեն բան պարզ ու կատարյալ: ՄԼԾ գործի պիտանի է Ծրագիրդ»: Շնորհակալ լինելով մեծ պատվի համար, ավելացնում է. «...ինչպես որ էլ լինին իմ վաստակները. պետք է խոստովանիմ, թե անոնք Ձեր բարեմտության և բարեկամության շնորհիվ փայլ առին, գին ունեցան, ուստի կրկին շնորհակալություն Ձեզ»¹⁴: (Ծրագիր) կազմողի մասին գովեստով է արտահայտվել նաև ազգագրագետ Ե. Լալայանը: Խալաթյանի հորդորանքով են հիմնվել «Հայոց ազգագրական ընկերությունը» և «Ազգագրական հանդեսը»: «Այժմ մնում է, — գրում է Լալայանը Խալաթյանին, — մի ուրիշ ցանկության իրականանալը, Դուք վեջադառնաք Կովկաս և ստանձնեք այս ընկերության ղեկավարությունը... որքան երջանիկ պետք է զգամ ինձ, եթե հանկարծ պեղումներիս գլխին կանգնեք Դուք. հիշում եք, որ հույսեր էիք տալիս»¹⁵: Մի ուրիշ նամակում գոհունակություն է հայտնում, որ Խալաթյանի միջնորդությամբ իրեն նպաստ է նշանակվել պեղումները շարունակելու համար¹⁶:

Ազգագրության վերաբերյալ նրա ունեցած հայացքը բնորոշելու տեսակետից հետաքրքրական է «Նյութեր հայ ազգագրության պատմությունից» գրվածքը, որը իր մեջ ամփոփում է զգալի փաստական նյութ: Խալաթյանի կարծիքով ազգագրությունը օգնում է պարզելու շատ ու շատ կարևոր խնդիրներ: Ժողովրդի բուն պատմությունը վերականգնելու անսպառ նյութը պարուրված է հեքիաթների, առասպելների, հանելուկների, առածների, գեղջկական երգերի և բանահյուսական այլ ստեղծագործությունների մեջ, որոնք «դարերի ընթացքում փոփոխվելով, բարդվելով, ձևակերպվելով, իրենց մեջ պարփակել են կյանքի իսկական պատկերը, «ժողովրդի ձգտումներն ու իդեալները»¹⁷: Ժողովրդագիտությունը ինքնաճանաչման մի հզոր միջոց է, գրում է Խալաթյանը, բացի այդ նա նպաստում է լեզվի, գրականության, բարոյադիտության, իրավագիտության զարգացմանը: Նա հրամայական պահանջ է համարում ազգագրական բաժիններ հիմնել Պոլսում, էջմիածնում, ընդլայնել բանահավաքման միջոցները, Թիֆլիսում կովկասագիտական համալսարան բացել: Հեղինակին մտահոգում է, որ շատ ավանդություններ, իրավական սովորություններ, շփվելով նորամուծություններին, գրավոր կանոններին՝ «անգիր օրենքը» «նվազում, մաշվում, արհամարհանքի կամ մոռացության է տրվում... կանցնի շատ-շատ մի կես դար և այդ մեր պապերից ավանդած հազարավոր տարիների շատ կողմերից թանկագին կտակը կկորչի անդարձ, եթե օրով առաջ հոգ չտանենք խնամքով արձանագրելու նրան և պահելու գիտության համար»¹⁸: Նա նշում է, որ երբ կարողանանք մեզանում էլ գիտության վերածել ազգագրությունը, այն ժամ հիմք կգոյանա գրելու մեր մշակույթի ու երկրի պատմությունը՝ «ճշմարտացի ու պատշաճավոր»¹⁹:

Խալաթյանը էմինյան մրցանակաբաշխության հանձնաժողովի նախագահն էր: Համաձայն վերջինիս կտակի որոշվում է հիմնել մի հանդես: 1901 թ. լույս

14 ԳԱԹ, ԳՆՖ, ք. 5, № 730:

15 Նույն տեղում, ք. 5, № 307:

16 Նույն տեղում, ք. 5, № 308:

17 Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. 7, էջ 47:

18 Նույն տեղում, էջ 48:

19 Նույն տեղում, էջ 29:

է տեսնում «էմինյան աղագորական ժողովածուն», որ հրատարակվում է մինչև 1908 թ.: Այն համառ ջանքերը, եռանդուն ստեղծագործական աշխատանքը, որ թափել է Խալաթյանը հանդեսի 8 հատորների խմբագրման, ծանոթագրության ու տպագրության ուղղությամբ, վեր է ամեն տեսակի գովեստից ու գնահատությունից. այդ գրքերը հայ աշխարհի ու ժողովրդի նկարագրի կոթողներ են:

1887 թ. Խալաթյանը գիտական նպատակով, պետական գործուղմամբ նորից գնում է արտասահման: Սեպտեմբերին նա հասնում է Վիեննա: Այս անգամ նույնպես զբաղվում է ձեռագրերով: Հաճախում է համալսարանի դասախոսություններին, ծանոթություն է հաստատում հայագետ Ֆ. Միլլերի հետ, որը կարդում էր արևելագիտական տոարկաներ:

Վիեննայից նա անցնում է Վենետիկ, հանդիպում Ալիշանին: «Որքան հավատ,— գրում է նա էմինին,— ինչպիսի հասարակ ու անկեղծ է նրա բառը, ինչպես անխարդախ է նրա խոսքը, ինչպիսի ջերմ սեր դեպի տարաբախտ հայրենիքը: Հայաստան — այդ երկիրն է կաղմում նրա մշտական խոհերը, նրա իղձերը, նպատակը նրա կյանքի: Ողջ Ալիշանը, կարևոր է ասել, դա անձնավորված Հայաստանն է»²⁰:

Ճանապարհորդության վերջին կեսը կայացրին էր, ուր նա մնում է մինչև սեպտեմբեր, լսում նշանավոր պրոֆեսորներ Բուզմանի, Լեսկիենի, Յառկեի, Գարդհանյանի դասախոսությունները: Վերջինս հայ հնագրության մասին մի աշխատություն ունի գրած: Վերադարձի օրերին Խալաթյանը գրել է մի հոդված, որտեղ հաղորդում է, որ ուսումնասիրած, բերած նյութերը կմշակվեն և բարեհաջող հանգամանքներում լույս կտեսնեն «պատշաճավոր հրատարակությամբ»: Սակայն բաղմալից գիտնականի ո՛չ ժամանակը, ո՛չ էլ կարճատև կյանքը բոլորն անելու միջոց չտվին:

Խալաթյանը 90-ական թթ. հրապարակում է մի շարք ուսումնասիրություններ՝ խորենացու «Հայոց պատմության» աշխարհաբար թարգմանության և «Վարդանանց պատմության» աղբյուրների վերաբերյալ, «Մնացորդաց գրքի», Զենոբ Գլակի և Սերեոսի «Պատմությունների» համեմատական քննությունը, էմինի, Ք. Պատկանյանի գործունեության մասին և այլն: 1893 թ. նրա առաջաբանով և խմբագրությամբ լույս է տեսնում Խ. Պատկանյանի երկերի ժողովածուն երկու հատորով: Հետագայում Վեսելովսկու և Մատուրյանի հետ հրատարակել է հայկական պոեզիայի ուսերեն հատորակը, որը նշանակալի երեւելով էր նկատվում 1900-ական թթ.: Հետաքրքիր մի աշխատանք է խորենացու «Հայոց պատմության» թարգմանության քննությունը²¹: Այդ առթիվ նրա մտքերը և եզրակացությունները մասամբ այժմեական են և ուսանելի: Անդրադառնալով պոեզ և նոր լեզվի համառ պայքարի պատմությանը, նա ողջունում է վերջինիս հաղթանակը, սակայն շեշտում է, որ հին լեզուն «հայ մտքի ու հանձարի գեղեցիկ արդյունքը», մեր բաղաբակրթության ու ինքնուրույնության անժելխտելի ապացույցն է: Ժողովրդի լուսավորությունն ու վերածնությունը նա առնչում է հին արժեքների պարզաբանման և տարածման հետ: Պատմիչներին թարգմանելը մի անհրաժեշտ պայման է առաջադիմության մարդում և դա պետք է նպաստի նոր դրականության ծաղկմանը, լեզվի անխաղճմանը: Գրաբար.

²⁰ Նույն տեղում, էջ 172:

²¹ «Մովսես Խորենացու Հայոց պատմությունը խորեն Ժ. Վ. Ստեփանեի թարգմանությամբ», Պ.-բուրգ, 1890:

գրականությունը չպետք է մնա «ծածուկ, թաքցվի դժվար ըմբռնելի հին լեզվի քողի տակ, այլ թարգմանվի դյուլաբար, հասկանալի ոճով և յուրաքանչյուրի ժողովրդի մեջ»։ Ե այց փոխադրությունը պետք է կատարել զգալի հոգածությամբ, զերծ բոլոր տեսակի սխալներից ու շեղումներից։ «Քաջ թարգմանչի կարևորագույն արժանավորություններից մեկն էլ ևս այն է, — գրում է բանասերը, — որ նա իր թարգմանության մեջ կարողանա արտափայլել, ցոլացնել բնագրի ոգին, բնորոշ ոճը, հեղինակի սեփական միտք արտահայտելու ձևն ու եղանակը»²²։ Այս էլ հենց, ըստ հալաթյանի, բացակայում է Ստեփաննի թարգմանության մեջ։

«Խորենացու սեղմ, ամփոփ և գեղեցիկ կազմած բարդ ածականները, — գրում է նա, — որոնք քիչ խոսքով շատ իմաստ են արտահայտում և այնքան ազդեցություն և վայելչություն են տալիս լեզվին, Ստեփաննի թարգմանում է կամ ավելի ուղիղ ասելով բացատրում է մի քանի բառով՝ ճապաղ, տափակ... դրանով հանցանք գործում լեզվի օրենքների դեմ»²³։

Հալաթյանին երկար զբաղեցնողը ևղավ Խորենացին։ Պատմահոր ժառանգությունը, ինչպես հայտնի է, շատերին է գրավել թե՛ մեզանում, թե՛ դրսում, բայց նրա կրքոտ հետազոտողը հալաթյանն էր։ 1896 թ. «Հայկական վեպը Մովսես Խորենացու հայոց պատմության մեջ» աշխատությամբ նա ստանում է գիտության մագիստրոսի աստիճան և պրոֆեսորի կոչում, իսկ 1903 թ. «Հայ Արշակունիները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» երկասիրությամբ պաշտպանում է դոկտորական դիսերտացիա։

Տեղի տալով այլ հեղինակների կարծիքներին, հենվելով երեքուն կովանների վրա, հալաթյանը մշակում է մի նոր տեսություն Խորենացու «Հայոց պատմության» շուրջը։ Նա ձգտում է հաստատել, որ պատմիչը իբր թե ավելի հեղինակավոր ճանաչվելու, գրքի հարկը բարձրացնելու միտումով խառնաշփոթություն է առաջ բերել իր ապրած ժամանակի, ստեղծագործության հանգամանքների և միջավայրի վերաբերյալ։ Նա պնդում է, որ մատենագիրը ապրել է VII—VIII դարերի միջև, դիտավորությամբ ծածուկ է պահել օգտագործած աղբյուրների մի զգալի մասի անունները։ Պատմիչի օգտագործած հեղինակներից մի քանիսը ապրել ու ստեղծագործել են V դարից հետո, հետևապես նա V դարում ապրելով չէր կարող ուշ շրջանի գրվածքներ օգտագործել։ Նախարարական անունները հնարովի են՝ բացատրություններով հանդերձ։ Խորենացու՝ թագավորների հաջորդաձև կարգը անապացույց մի բան է։ Որպես թե արձանագրած վեպերից շատերը հորինել է ինքը՝ պատմիչը, օտար առասպելների նմանությամբ։ Հալաթյանը ի վերջո «Հայոց պատմությունը» գնահատում է ոչ ճշմարտապատում աշխատանք, այլ գրական մի հոյակապ քերթվածք։ Այս է քննադատի վճիռը պատմագրի անձի ու երկի մասին։ Հայտնի է, որ այս տեսակետը քննության առարկա է դառնում, մեծանում է հետաքրքրությունը «Հայոց պատմության» հեղինակի շուրջը։ Խորենացու «առեղծվածի» շուրջ ծագած վեճը բավական ջանքեր է խլել գիտնականներից և մի տեսակ նպաստ է եղել հայագիտության զարգացման ճանապարհին։ Ինչպես հայտնի է, այժմ այդ խնդիրը վերջնականապես լուծված է հօգուտ պատմահոր ճշմարտապատում լինելուն։

²² Նույն տեղում, էջ 9։

²³ Նույն տեղում, էջ 30։

1890-ական թթ. Խալաթյանը խմբագրում է Լմինի աշխատությունների ժողովածուները։ Համբուրգում զուգարված արևելագետների միջազգային հանձնաժողովում երկու ղեկուցում է տալիս (1902 թ. օգոստոս) հայոց պատմության վերաբերյալ²⁴։ 1908—1909 թթ. Խալաթյանը շարագրում է Հայաստանի հին պատմությունը սկզբից մինչև IV դարը։ Գիրքը լույս է տեսել 1911 թ. ձեռագրի իրավունքով («Очерки истории Армении»)։

Խալաթյանը մեղանում առաջիններից էր, որ ձգտում էր պատմությունը գնել գիտական հողի վրա։ Նրա համար պատմությունը դադարել է թագավորների, նախարարների զործողությունների ու պատերազմների նկարագրություն լինելուց։ Պատմական անցքերը և երևույթները գիտնականը քննում է պատճառական ընդհանուր շղթայի մեջ, տնտեսական, առևտրական փոխներգործությունները, դասային և սոցիալական այլ առնչությունները համարում է գործոն միջոցներ հասարակական կյանքում։ Նրա աշխատության առավելություններինց մեկն էլ այն է, որ մեր երկրի պատմությունը գծագրված է Հին Արևելքի պատմությանը կապակցված։

Խալաթյանը մանկավարժական աշխատանքը սկսել է 1883 թ. Լադարյան ճեմարանում, երբ համալսարանի ուսանող էր²⁵։ Քիչ փաստեր կան պարզելու, թե ինչ հայացքներ է ունեցել նա մանկավարժության ասպարեզում, սակայն դատելով կողմնակի վավերագրերից, կարելի է ասել, որ հետևել է ժամանակի դեմոկրատական ուղղությանը։ Ինչպես նշել ենք, համալսարանում ղեկուցումներ է կարդացել այլևայլ թեմաներով, որոնցից նրկուսը վերաբերում են Ռուսոյին։ Փաստը ինքնին հաստատում է, որ վերջինս լարենար աղղեցություն է ունեցել նրա գաղափարների ձևավորման վրա։ Բացառված չէ նաև, որ ուսումնասիրած լինի ֆրանսիական մյուս լուսավորիչների երկերը, ինչպես և ռուս նշանավոր մտածողներին՝ Բելինսկուն, Գերցենին, Պիսարևին, Ուլինսկուն։

Լադարյան ճեմարանում նա դասավանդել է հայոց չեղու, գրականություն, Հայաստանի պատմություն։ Կազմած կոնսպեկտներից երևում է այն քրտնաջան աշխատանքը, որ կատարել է նա մատուցվող նյութը պատրաստելիս²⁶։ Պրոֆ. Խալաթյանը ինքն էր մշակում առարկաների դասընթացը։ Նա ճեմարանում պաշտոնավարել է մինչև կյանքի վերջը՝ մոտ 30 տարի։ 1890 թ. ստանձնում է տեսուչի պարտականությունը։ 1895 թ. նշանակվում է ճեմարանի ղեկավար մինչև 1898 թ., որից հետո դարձյալ՝ տեսուչ²⁷։

Ճեմարանի տեսչությունից Խալաթյանի ազատվելու պատճառը լինում է ուսուցիչ Պավլովի լուսավորության միեխտրությունը ուղարկած ամբաստանագիրը, ուր նա տեսուչին մեղադրում էր ազգային խտրականության մեջ։ Գործը հասնում է այնտեղ, որ միեխտրությունից գաղտնի կարգադրություն է արվում՝ ստիպելու Խալաթյանին հրաժարական տալ, սակայն դպրոցի վարչությունը, առանց վերջինիս դիմումի, նրան արձակելու վճիռ է կայացնում։ Ինչպես ասում է Շահադիզը, պատվասեր Խալաթյանը մի ընդարձակ բողոք է ուղարկում միեխտրություն, պահանջելով հանձնաժողով՝ իր գործունեությունը ստուգելու համար։ Այդպես էլ լինում է։ Հանձնախումբը անմեղ է ճանաչում նրան։ Բե-

²⁴ Տե՛ս «Ազգագրական հանդես», 1912, 22-րդ գիրք, էջ 252։

²⁵ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 161։

²⁶ Տե՛ս ԳԱԽ, ԳԽՖ, ք. 1, № 31, 32, 33 և այլն։

²⁷ Տե՛ս Մոսկվայի քաղաքային արխիվ, ֆ. 213, գ. 284, թթ. 95 և 126։

նախնական է փառաբանական պատկերացումները: Պատճառով ինքնուրույն և անկախ պատկերացումներ չեն զարգացել: Երբեք չեն զարգացել և մնում է միայն ընդհանուր պատկերացումը²⁸:

ՄԱԹ Թ. Խաչատրյանը հրատարակում է Մոսկովայի Կաթերական համալսարանի և Ասորիում հայ աղանդականության դասընթացը²⁹ և ինքնուրույն ժողովրդի Խաչատրյանը հայտնաբերում ու նկատարարում աստուծո է եղել հայ ժողովրդի նախնի Շիրիմանյանին: Պր. Նիկողոսյանին, Մինաս Չերազին և այլոց:

Այս հարգելի և անկախ մի տղան իր մտածողականության համար: Այսպես խաչատրյանը ինքն իր խաչատրյան մտածողի ու խաչատրյան հյուրերը, ուսանողները, վերնում, նախնականում, առանձին խաչատրյան լուծում: Նման հանդիպումները մեկնում են, որոշակի, ծնունդ առնում հայության-Մասեհյան բարեկամությունը, առանձին խաչատրյան և նրա էությունը նաև Շերազի հայերեն տպագրում³⁰:

Խաչատրյան ձևավորումը ՄԱԹ Թ. հեղինակների 14-ին տնում էր պրոֆ. Խաչատրյանի գործունեությունը շարունակում էր իր զեպը լրացել էր ոչ թե 25, ոչ 29 տարին, քանի որ նա աշխատում է ՄԱԹ Թ. (հեղինակ): Զիվանդ հորեղարը հանդիսանում էր: Ձևավորումը ասաները հարգելի պրոֆեսորին ուղարկում են հեղինակ հեղինակը: ՄԱԹ Թ. հայ տառադրանք, անկեղծորեն շնորհակալ թանկագին խաչատրյանին: Կրթական հասարակության համար ենք նրան խորին երախտագրություն մեզ դուրս ազատ ջանք զերաբերումների համար, նրա շանքերի համար՝ արթնացնել, զարգացնել մեր մեջ չենք ուղի հայոց լեզուն և գրականության զարգացումը, հաստատ հայոց ուսումը: Իր աշխատանք ևս պետք է աշխատի, առաջնորդել մեզ սիրո շարժում մեր հայրենիքը և նրա հնությունները: Լազարյան ձևավորումը հայ ուսանողները³¹:

Նման ողջուններ են սաացվել այլ կազմակերպություններից. Խմբագրություններից և անհատներից:

Խաչատրյանը այնպիսի ազդեցություն, 1912 թ. փետրվարի 8-ին մահանում է Թիֆլիսում և հողին է հանձնվում Մոսկովայում, հոր և էմիլի կողքին:

²⁸ ՄԱԹ, ԿԵԶ, Բ. Բ, Կ Կ 19, 24.
²⁹ ՄԱԹ նույն տեղում, Բ. 4, Կ 3.
³⁰ Նույն տեղում, Բ. 7, Կ 47.
³¹ ՄԱԹ ՄԱԹ ԿԱ լրագրող, ԿԵԶ, Բ. Բ, Կ 11, Կ 67-68.
³² ՄԱԹ, 1911, Կ 227: